ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՄԱՔԵՆԻՍԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Մաքենիսը Հայաստանի հնագույն մշակութային կենտրոններից է։ Մինչև 10-րդ դարը Մաքենիս բնակավայրը համանուն վանքով մտնում էր Գեղարքունիքի գավառի մեջ, իսկ Սյունյաց մետրոպոլիտ Հովհաննեսի օրոք այն Սյունյաց Սոթք գավառի 80 հարկատու գյուղերից մեկն էր[1]։

Մաքենիսը հայտնի էր իր «հռչակաւոր, համբաւատենչ եւ մեծասքանչ» վանքով։ Հնում գյուղը և վանքը նույնանուն են եղել և կոչվել են Մաքենոց, Մաքենյաց կամ Մաքենոցաց, ինչպես նաև Մաքեստից անուններով։

Մաքենիսում միաբանություն հիմնվել է դեռևս 8-րդ դարից առաջ և, աղբյուրների վկայությամբ, իր հնությամբ և նշանակությամբ նույնացվել է միաբանություններից հնագույններից մեկի՝ Ակոռիի միաբանության հետ[2]։ Այդ մասին են վկայում նաև վանքի պարսպի ներսում և նրանից դուրս հայտնաբերված՝ վաղ քրիստոնեության շրջանի շինությունների հետքերը[3]։

Մաքենոցաց վանքը կառուցված է ձորի պռնկին, կարմրագոյն քարով, դրա համար էլ այն երբեմն կոչվել է նաև Կարմիր վանք[4]։ Վանքի և նրա միաբանության մշակութային ծաղկուն գործունեությունը սկսվում է 8-րդ դարի սկզբից և կապվում է Հարանց հոր՝ «զիլռչակելի այրն» Սողոմոնի անվան հետ, որն, ինչպես վկայում է Մովսես Կաղանկատվացին, «ժամանակին Հայաստանեայցն պարծանք» էր[5]։

Վանքի գործունեության մասին գրավոր վկայությունները բացակայում են մինչև 15-րդ դարը։

14-րդ դարի վերջին և 15-րդ դարասկզբին Լենկ Թեմուրի և նրա հետնորդների աշխարհավեր արշավանքներն ու պատերազմները քանդեցին ողջ Հայոց աշխարհը, քաղաքների և գյուղական բնակավայրերի հետ ավերվեցին վանքերն ու մենաստանները։ Սյունյաց նահանգում ուղտերին բարձած թշնամին գերեվարեց նաև վանքերում պահվող ձեռագրական վիթխարի հարստությունը[6]։ Ուստի գրչական վաղ շրջանի ընդօրինակությունների կորուստը մեծ է։

Մաքենոցաց կենտրոնից մեզ հասած առաջին ձեռագիրն Ավետարան է, որի

---

[1] **Ստեփաննոս Օրբելյան,** Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 304-305, 315։

[2] **Ղ. Ալիշան,** Սիսական, Վենետիկ, 1893, էջ 65-66։

[3] **Ստ. Մնացականյան,** Հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 60։

[4] **Ղ. Ալիշան,** Սիսական, էջ 66։

[5] **Մովսես Կաղանկատվացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 314։ Սողոմոն Մաքենացու մասին տե՛ս **Ա. Ղազարոսյան,** Մաքենացոց ուխտը և Սողոմոն Մաքենացին, «Էջմիածին», 2002, Դ, էջ 36-42։

[6] **Ղ. Ալիշան,** Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 12։

«առաջին գլուխն՝ ըսկիզբն» Հովհաննես աբեղան գրում է Մաքենիսում՝ «ի խնդրոյ Սպահանին», ի հիշատակ նրա կին Գուլիի և ի վայելումն «հոգեւոր որդոյ Ովանէսին»[7]: Ձեռագիրն ընդօրինակելիս գրիչը մաքուր թերթեր է թողել ավետարանիչների նկարների, էջամասեր՝ ավետարանառաջների, լուսանցազարդերի, զարդագրերի, լուսանցապատկերների համար: Ընդօրինակությունը շարունակելու և նկարչի հետ համատեղ աշխատելու համար հենց այս Հովհաննես Դրախտիկցու ցանկությամբ էլ Հովհաննեսը Մաքենիսից տեղափոխվել է Սաղմոսավանք, ուր այդ ժամանակ իր հերթական ձեռագիրն էր նկարազարդում հայտնի մանրանկարիչ Հովհաննես Առնջեցին: Ավետարանն ավարտվում է Սաղմոսավանքում «ի թվականիս Հայոց ՋԽԵ (1496)»[8]: Հենց այստեղ նույն տարում էլ Ստեփանոս Առնջեցին «ի խնդրոյ տէր Յովհաննէս Դրախտիկցոյ» նկարազարդում է սույն մատյանը[9]:

Նույն թվականին Մաքենիսում ընդօրինակվել է մի այլ ձեռագիր, որի գրիչը Ալեքսանոս աբեղան է: Գրիչը այն գրել է իր համար: Ձեռագիրը նուրբ կաշվից պատրաստված մագաղաթի վրա բոլորգրով գրված Ավետարան է:

Գրելիս Ալեքսանոսին օգնել է տեր Եզեկիելը, որն արտագրել է միայն մի էջ[10]: Վարպետ գրիչ էր տեր Եզեկիելը, քանի որ մատյանի այդ մի էջը ավելի նուրբ մագաղաթից է և դրա վրա գրելը բավական դժվար էր և ընդօրինակողից մեծ հմտություն էր պահանջում: Ալեքսանոսը, հավանաբար, խուսափելով թանաքի՝ թերթի մյուս կողմը թափանցելու վտանգից, խնդրել էր էջը գրել այդ իրենից ավելի հմուտ Եզեկիել գրչին:

«Հէք, ֆանաք, վտիտ Ալեգսանոսն» ավարտում է ձեռագիրը Սուրբ Աստվածածնի և Հայր Սողոմոնի գերեզմանի հովանու ներքո իր և իր ծնողների, հորը՝ Էտկիարի, մորը՝ Մարթի և հարազատների հիշատակի համար[11]:

Տարիներ անց, գրչի խնդրանքով, այս ձեռագրի նկարազարդումը կատարվում է Սևանավանքում: Ավարտելով նկարազարդումը, Սահակ աբեղան թողնում է իր հիշատակարանը. «Ծաղկեցաւ ի տանս Գեղամա, ի Սուրբ ուխտս Սեւան, ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոցս, առաջնորդութեամբ Դանիէլ վարդապետին եւ Գրիգորիս եպիսկոպոսի, ձեռամբ փծուն եւ անարժանս սուտանուն աբեղայ [որ] Սահակ կոչի, ի խնդրոյ տէր Ալէքսանոս ճրգնաւոր աբեղայի ի թվականիս ՋԾԳ (1504)»[12]: Դանիել բաբունապետի վարդապետարանի մանրանկարչական դպրոցի սան է Սահակը: Վար-

---

[7] Մատենադարան, ձեռ. թիվ 4266, էջ 271բ-272ա:

[8] Նույն տեղում, էջ 271բ:

[9] Մատենադարան, ձեռ. թիվ 4268, էջ 137բ: Հիշատակարանը բացակայում է ԺԵ դարի հիշատակարանների Գ մասից: Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, մասն Գ, Երևան, 1960:

[10] Նույն տեղում, ձեռ. թիվ 6648, էջ 201ա:

[11] Նույն տեղում, էջ 264ա:

[12] Նույն տեղում, էջ 124: 16-րդ դարում ձեռագիրը, երբ թաթարական հերթական արշավանքով «բազում տեղիսն աւերեաց», իր տիրոջ հետ միասին հաստատվում է «ի երկիրս Զակամ, ի գիւղս Պլաւկ» (265բ): 1776 թ. Ավետարանի վերջին ստացող նորքեցի Ավետիսը և նրա որդի Սահակը նորոգում, կազմում են Ավետարանն ու տալիս ի հիշատակ Նորքի Սուրբ Սիոն եկեղեցուն: 20-րդ դարի սկզբին, 1923 թ., Երևանի եկեղեցիների ձեռագրական ցուցակով այս Ավետարանն ի թիվս այլ ձեռագրերի հանձնվում է Սուրբ Էջմիածնի Մատենադարանին (նույն տեղում):

պետությամբ նկարազարդված Ավետարանում այժմ մնացել են միայն Մատթեոս և Ղուկաս ավետարանիչների նկարները, ինչպես նաև գեղեցիկ լուսանցազարդերով և զարդագրերով ծաղկված ձեռագրի էջերը։

Մաքենիսում օրինակված Ալեքսանոս գրչի մյուս ձեռագիրը 1499 թվականից է։ Այն փոքրաղիր, բոլորգիր Ավետարան է։ Այս անգամ Ալեքսանոսը նաև ձեռագրի ծաղկողն է։ Ալեքսանոսը թեև հմուտ գրիչ է, սակայն անվարժ է նկարազարդման արվեստում, ուստի և ծաղկելու համար նա օգտագործել է հատուկ կաղապարներ։ Կաղապարով են արված ոչ միայն ձեռագրի ավետարանառաջները, գլխազարդերն ու լուսանցազարդերը, այլև ավետարանիչների պատկերները։ Սկզբում յուրաքանչյուր էջի վրա կաղապարի օգնությամբ գծել է զարդերն ու գլխազարդերը, ապա գրել նրան համապատասխանող տեքստը (որոշ էջերում բնագրի տառերը գրվել են գլխազարդի ծայրերին)։ Ավետարանի յուրաքանչյուր ընթերցված գրված է լուսանցազարդերի շրջանակների մեջ։ Ալեքսանոսը նկարները չի գունազարդել, նկարազարդումը ուրվագծային է։ Գրչարվեստի ուսումնասիրության համար առանձնապես հետաքրքիր է մանրանկարներում ավետարանիչների պատկերներին ուղեկցող՝ գրչության արվեստի հետ կապվող նյութերի առկայությունը՝ մկրատ, ունելի, գրչահատ, գրիչներ, թանաքամաններ, սափորներ և այլ պարագաներ, որոնք ամեն տեղ ուղեկցել են գրիչներին նրանց ծանր, անգնահատելի աշխատանքում։

«Ֆանաք» Ալեքսանոսը Ավետարանն ավարտում է 1499 թ. «ի սուրբ ուխտս Մաքենացոց, ի դուրս սուրբ տաճարին Աստուածածնիս, հայր Սողոմոնի նշխարացս ի առաջնորդութիւն ուխտիս Թաթէոս եպիսկոպոսին»[13]։

Ձեռագրագետ Լ. Խաչիկյանը նույն «ֆանաք» Ալեքսանոսի ձեռքով գրված է համարում նաև Մատենադարանի թիվ 3629 ձեռագիրը[14]։ Այդ նույնացումը հաստատվում է Ալեքսանոսի օրինակած՝ վերը նշված ձեռագրերի հետ այս ձեռագրի համեմատությամբ։ Ավետարանը գրված է բոլորգրով, ունի ավետարանիչներ և ավետարանառաջներ, չունի համաբարբառ և ցրվացանկ։ Վատ է պահպանվել ձեռագրի գլխավոր հիշտակարանը. գրչի անվան տեղում այն եղծված է։ Լ. Խաչիկյանը այն վերականգնել է այսպես. «Սուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց ՋԽԷ (1498 թ.), ձեռամբ անարժան, հեք ֆան[աք/// Ալեգսիանո]սու միայն աբեղա ի Սուրբ ուխտս Մաքենացոց, ի դուրս սուրբ տաճարիս եւ հայր Սողովմոնի գերեզմանիս և այլ սրբոց, որ աստ կան, յառաջնորդութեան Սուրբ ուխտիս Սարգիս վարդապետին»[15]։ Ալեքսանոսը թեև ձեռագիրը սկսել է Մաքենիսում, բայց Թադեոս եպիսկոպոսի գալուց հետո, երբ միաբանության անդամների մեջ անհամաձայնություն է առաջանում, գրիչը դժգոհ այս ամե-

---

[13] Մատենադարան, ձեռ. թիվ 220, էջ 274ա։ Ձեռագիրը նորոգվել է 16-17-րդ դարերում։ Նորոգման ժամանակ Մատթեոսի Ավետարանի սկիզբը թափված է եղել և լրացվել (թերթ 1-58)։ Նորոգող գրիչն աշխատել է պահպանել Ալեքսանոսի գրելաձևը, տողաքանակը (19-20, հարմարեցրել էջը էջին և այլն։ 17-րդ դարի սկզբին այն եղել է Գրիգոր վարդապետի սեփականությունը և պահվել Գրիգոր Լուսավորիչ վանքում (նույն տեղում, էջ 1ա)։

[14] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Գ, էջ 261, ծն. 1։

[15] Նույն տեղում, էջ 261։

նից՝ տեղափոխվում է Վասակաշեն: «Ի Մաքենիս սկսա եւ [ի Վ]ասակաշէն վճարեցի»,- գրում է գրիչը[16]: Ալեքսանոսի այս Ավետարանի ընդօրինակման ավարտը համընկնում է Իպա սուլթանի խռովության հետ, որն «էած աւեր աշխարհի»: Այս տարիներին ժողովրդից երեք տարվա հարկը մեկ ամսում էին վերցնում, և իր հավատավոր ժողովրդի նման գրիչը վերջին հույսը դնում է Աստծո վրա՝ «Աստուած զԻւր ումր կարճ անէ սրբոց բարեխաւսութեամբ. ամէն»[17]:

Այս գրչության կենտրոնից մեզ հասած վերջին ձեռագիրը 1524 թվականից է: Ձեռագրի գրիչը դարձյալ Ալեքսանոսն է. «Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս թվականիս Հայոց ՋՀԳ (1524 թ.) ձեռամբ ոգնամեղ, հէք, ֆանաք Ալէքսանոս անուամ[բ] միայն աբեղա ի Սուրբ ուխտս Մաքենացւոց»[18]: Ստացողը Շահնազար հավատավորն է, նրա մայրը՝ Տետա Խաթունը, հայրը՝ Հովհաննեսը: Ձեռագիրը գրված է բոլորգրով, թղթի վրա, նկարազարդ է, ունի ավետարանիչներ և ավետարանառաջներ[19]:

Սակայն, մինչ այդ, մենք այդ գրչից ունենք երկու այլ ընդօրինակություն ևս: Դրանցից մեկը Գեղարքունիքի մեկ այլ գյուղում է գրված՝ Խորոտկավանքում, մյուսը՝ Ցողաց քարում: Գեղամա երկրում հայտնի, հմուտ գրիչ էր Ալեքսանոսը և, ինչպես երևում է, գրչությունը նրա հիմնական մասնագիտությունն էր: Մատյանների ընդօրինակման բարդ ու դըժվարին աշխատանքով է գրիչն ապահովում իր հանապազօրյա հացը: Ալեքսանոս գրչի Խոնդքար տիկնոջ համար օրինակած Ավետարանը փոքրադիր է: Ձեռագիրը չունի համաբարբառ, ցրվացանկ, նախադրություն: Ավետարանի ծաղկողը հայտնի չէ, հնարավոր է, որ այս անգամ ևս նկարազարդումը գրչինն է՝ Ալեքսանոսինը: Ավետարանի պատվիրատուն ստանում է այն «[յ]իշատակ իւր, եւ առն իւրոյ՝ Ղարիպշա աղին, եւ ծնողաց իւրոց հաւր իւր՝ Էտիլշին եւ մաւրն՝ Մամատետին»[20]: Նա ընդօրինակումն ավարտում է 1490 թ. «ի հայրապետութեան տեառն Սարգսի, ի ղանութեան Յաղուպ բէկի... ի յերկնահանգէտ եւ գերահռչակ սուրբ ուխտիս Խորոտկայ...»[21]:

Այս նույն ժամանակներից է նաև այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մատենադարանում պահվող ձեռագիրը: Ցողաց քարում (որը, հավանաբար, Վայոց ձորի Ցախաց քարն է) ընդօրինակված 1476 թ.: Ժամագրքի գրիչը Էտքիարի և Մարթի որդի Ալեքսանոսն է:

Ալեքսանոս գրչից մեզ հասած ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մենք գործ ունենք հմուտ, վարժ, բեղուն գրչի հետ: Հովհաննեսի, Եզեկիելի և մաս-

---

[16] Նույն տեղում:

[17] Նույն տեղում: Ձեռագիրը նորոգվել է 17-19-րդ դարերի ընթացքում:

[18] Մատենադարան, ձեռ. թիվ 8196, էջ 300բ:

[19] 1644 թ. ձեռագիրը տեղափոխվում է Արցախ, դառնում Ջիլախանի սեփականությունը, որն այն նվիրում է Գանձակի Շատախ գյուղին՝ «ի դուռն Աստուածածին եկեղեցւոյ» (2ա), այնուհետեւ՝ 1805 թ. Պարանց գյուղի Դավիթ քահանային, ապա 1886 թ. տեղափոխվում Թարգմանչաց վանք (302ա-303բ,305բ): Ուրեմն, ձեռագիրը երկար ժամանակ պահվել է Արցախում:

[20] Մատենադարան, ձեռ. թիվ 8135, էջ 319ա:

[21] Նույն տեղում:

նավորապես Ալեքսանոս գրչի ընդօրինակությունները խոսուն վկայություններ են Մաքենոցաց մենաստանի գրչական ավանդների շարունակության, ինչպես նաև այստեղ 15-16-րդ դարերում մշակութային կյանքի գոյության։

16-րդ դարից սկսած Մաքենիսը դառնում է Գեղարքունիքի նոր իշխանական տան սեփականությունը։ Նրանցից Մելիք Բեկի որդին՝ Աստվածապովը, որն էր «իշխող տանս Գեղամա», վերստին նորոգում է համալիրի գլխավոր եկեղեցին՝ Սուրբ Աստվածածինը։ Մելիք Բեկը իշխել է մինչև 16-րդ դարի 2-րդ կեսը, 1578 թ.։ Այս եկեղեցին նորոգվում է նաև 1666 թ., ուխտի առաջնորդ Խաչատուր Ջուղայեցու միջոցներով[22]։ 19-րդ դարի 60-ական թվականներին Նոր Բայազետի իշխանները առաջնորդ են խնդրում այս վանքի համար։ 1878 թ. տեղի նորընտիր առաջնորդը չի կարողանում թուրքերի ճնշման տակ բարեփոխումներ անել, և վանքը վերածվում է պատմական հուշարձանի[23]։

[22] Դիվան հայ վիմագրության, պր. 4, Երևան, էջ 291-292։

[23] **Մեսրոպ արքեպս. Սմբատյանց,** Տեղագիր Գեղարքունի գաւառի, որ այժմ Նոր Բայազիտ գաւառ, 1896, Վաղարշապատ, էջ 577, ծն. 1։